12 հունվարի 2017 թվականի N 3 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N 145-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 145-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները՝

1) որոշման՝

ա. 1-ին կետի 2-րդ ենթակետից հանել «, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ» բառերը,

բ. 2-րդ կետի 9-րդ և 10-րդ ենթակետերն ուժը կորցրած ճանաչել,

գ. 2-րդ կետի 12-րդ ենթակետից հանել «, մինչև երկու տարեկան երեխային խնամքի նպաստի» բառերը.

2) որոշման N 2 հավելվածում՝

ա. 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 12-րդ ենթակետով.

«12) 12 ամիսների ընթացքում ընտանիքի սպառած բնական գազի քանակը:»,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 16.1-ին կետով.

«16.1. 12 ամիսների ընթացքում ընտանիքի կողմից բնական գազի սպառման հանգամանքը՝

1) ընտանիքի անապահովության միավորի վրա ազդում է K_{pq} գործակցի միջոցով, որն ունի 0-ական արժեք, եթե 12 ամիսների ընթացքում ընտանիքի սպառած բնական գազի քանակը գերազանցում է սահմանային չափաքանակը, որը Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի N 3-Ն որոշմամբ նախատեսված փորձնական ծրագրի շրջանակներում սահմանում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը.

2) նշված պայմանը չբավարարող մնացած ընտանիքների համար K_{pq}-ն հավասարվում է 1.0-ի:»,

գ. հավելվածի 19-րդ կետի բանաձևը «$K_է$» տառերից հետո լրացնել «x K_{pq}» տառերով.

3) որոշման N 3 հավելվածում՝

ա. 7-րդ կետից հանել «քաղաքացուն տրամադրված բնակչության պետական ռեգիստրում հաշվառման մասին տեղեկանքի կամ» բառերը,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 19.1-ին կետով.

«19.1. Ընտանիքի կողմից 12 ամիսների ընթացքում բնական գազի՝ սահմանված չափաքանակից ավելի սպառած լինելու հանգամանքն ամրագրվում է «09» ծածկագրով, որը կարող է չամրագրվել, եթե առկա են խորհրդի պատշաճ հիմնավորված առաջարկությունը դրա մասին և տարածքային կենտրոնի կազմակերպած տնային այցելության ընթացքում կատարված ուսումնասիրության մասին արձանագրությունը:»,

գ. 20-րդ կետում «15-19-րդ» բառերը փոխարինել «15-19.1-րդ» բառերով,

դ. 20-րդ կետի 1-ին ենթակետը «16-րդ» բառից հետո լրացնել «և 19.1-ին» բառերով,

ե. 34-րդ կետի 1-ին ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «զ» պարբերությամբ.

«զ. անձնական օգտագործման ավտոմեքենայի առկայության և տեխնիկական զննում անցնելու հանգամանքի մասին։»,

զ. 34-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ ենթակետով.

«3) 12 ամիսների ընթացքում ընտանիքի սպառած բնական գազի՝ սահմանված չափաքանակից ավելի սպառած լինելու մասին։»,

է. 44-րդ կետում «անհամապատասխանության» բառը փոխարինել «համապատասխանության» բառով,

ը. N 1 ձևի 3-րդ կետը «տվյալներով,» բառից հետո լրացնել «սպառած բնական գազի քանակը՝ «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունում առկա տվյալներով,» բառերով,

թ. N 4 ձևի 33-րդ կետում «19» թիվը փոխարինել «19.1» թվով.

ժ. N 7 ձևը «Էլեկտրաէներգիա» պարբերությունից հետո լրացնել «Բնական գազ» պարբերությամբ.

4) որոշման N 7 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 8-րդ կետով.

«

8.	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ (համաձայնությամբ)	բնական գազի բնակիչ բաժանորդներ	բաժանորդի անունը, հայրանունը, ազգանունը, բնակության վայրը, անձնագրի սերիան, համարը, բաժանորդի քարտի համարը, բնական գազի սպառման ամսական չափը, հանրային ծառայությունների համարանիշի համարը	նախորդ 12 ամիսների ծախսը	յուրաքանչյուր ամսվա 25-ը	առցանց՝ վեբ ծառայության միջոցով

».

5) որոշման N 8 հավելվածի՝

ա. 35-րդ կետում «21» թիվը փոխարինել «30» թվով,

բ. 42-րդ կետում «7-օրյա ժամկետում» բառերը փոխարինել «5 աշխատանքային օրվա ընթացքում» բառերով,

գ. N 4 ձևի 19-րդ կետում «հեռախոս» բառը փոխարինել «բնական գազ» բառերով.

6) որոշման N 13 հավելվածի վերնագրից և 1-ին կետից հանել «և մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի» բառերը:

2. Սահմանել, որ 2017 թվականի ընթացքում իրականացվում է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում՝ ընտանիքի սպառած բնական գազի սահմանային չափաքանակների կիրառման փորձնական ծրագիր:

3. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում սահմանել ընտանիքների անապահովության գնահատման համակարգում 12 ամիսների ընթացքում ընտանիքի սպառած բնական գազի սահմանային չափաքանակը.

2) մինչև 2018 թվականի հունվարի 1-ը, իրականացված փորձնական ծրագրի արդյունքների ամփոփմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություն ընտանիքի սպառած բնական գազի սահմանային չափաքանակի մասին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ